



ՏԱՂԱՐՆԱԹԻ ԱՐՅՈՒՆՔԸ



Տիմալայի ծերպերում, Քաշեմիրի մօտերում ապրում էր մի իմաստուն և բարեպաշտ միայնակեաց, Նրկինց տէր Մագադեվան նորան բոլոր մարդկանցից շատ սիրեց, որովհետև խիստ ծոմապահութեան և ջերմեռանդ աղօթքում Տաղարնաթին հաւասար չ'կար մէկ ուրիշը:

Քարծրանում էր Տաղարնաթի բարձր ժայռի գագաթի և այն պահուն, երբ անուշահոտ դիշերը սքողում էր երկիրը, երբ վառ աստղերը սիրահեղ նայում էին երկրի վերայ, ճգնաւորի ջերմ աղօթքը դէպի Մագադեվայի գահն էր ուղղւում:

Եւ երբ դարևոր ծառերի գագաթների ետևից սկըսում էին շողշողալ ոսկի ճառագայթների առաջին ճաճանչները և երբ ճնճղուկը ուրախ ծլվոցով ողջունում էր նոր բացուող առաւօտը, — դէպի տիեզերքի մեծ արարիչն էր վերադառնում Տաղարնաթի աղօթքը:

Եւ այն պահուն, երբ դարկանում էր վերջալոյսի վառ բոցը, երբ ամօթխած միմօգները ծալում էին իւրեանց թերթիկները, երբ վարդագոյն ամպիկները հետգհետէ հալչում էին երկնակամարի անհուն տարածութեան մէջ և ամբողջ բնութիւնը բուն մտնելով խոնարհում էր Մագադեվայի վեհութեան առջև, — այդ ժամին միայնակ և ջինջ, որպէս արեւը, ջերմ աղօթք էր կարդում Տաղարնաթի:

Դիդրդաց, շառաչեց որոտը և վառ կայծակի փայլի մէջ երևեցաւ Մագադեվան, հնչեց նորա ձայնը և խաղա-

ղեցաւ որոտր ու կայծակի շանթերը խոնարհեցան նորա ոտքերի առջև:

Եւ ասաց Մազադեւիւն:

— «Ո՛վ մահկանացու. Թո աղօթբը ցնցեց իմ գահիս պատուանդանը, երկնային աստղերը շողունցան իւրեանց ճանապարհից, թնկացին ամբողջ երեք աշխարհները: Աստ, ինչ ես կամենում, խնդրիր և ես կ'կատարեմ քո խնդիրը:»

— Հայր լուսոյ, արարիչ տիեզերքի, — ասաց Տաղարնաթը, — մարդիկ տանջւում են, վազըր յափշտակում է մօր ձեռքից մահկանը, արևը կիզում, ոչնչացնում է հողագործի հունձը. իսկ հեղեղը աւերում է նորա պատուարանը: Օգնիր խեղճ մարդկանց, հայր լուսոյ, օգնիր նոցա, արարիչ տիեզերքի:

Եւ ասաց Մազադեւիւն. և նորա ձայնը մեղմ էր, հեղ ու ակործալուր, ինչպէս վտակի խոխոջը և նորա խօսքերը քաղցրահնչին էին, որպէս արտուտի դալալիկը:

— «Ես չեմ կարող մարդկանց տալ երջանկութիւն, որովհետեւ բախտաւորութեան ու անբախտութեան աղբիւրը նոցա ձեռքումն է, բայց ես տալիս եմ քեզ այնպիսի մի ոյժ ու իշխանութիւն, որից աւելի մահկանացուն չէ կարող ունենալ: Դնա՛, օգնիր մարդկանց և թող դա լինի քեզ վարձատրութիւն»:

Դնաց Տաղարնաթը մարդկանց մօտ և հրամայեց նոցա միանալ, փորել իւրեանց դաշտերում ջրանցքներ, փորել մի մեծ ջրանցք հեղեղաջրի համար և շինել ջրամբար: Յետոյ սովորցրեց մարդկանց զանազան արհեստներ և ճարտարութիւններ և հրամայեց նոցա միշտ միասին ապրել, իբրև մի ուժեղ ժողովուրդ, որպէս զի ոչ վայրենի գիշակերներից, ոչ հեղեղներից և ոչ երաշտութիւնից չ'վախենան:

Եւ տեսաւ Տաղարնաթը, որ այն բոլորը, ինչ որ նա արել էր, լաւ է և լցունց նորա սիրտը անկեղծ հրճուանքով: Օրհնեց նա մարդկանց և բարձրացաւ Հիմալայի գագաթը, խոնարհեցաւ Մազադեւիւնի առջև ջերմ գոհաբանական աղօթք մրմնջալով:

Բարձրացաւ երկրից գոլորշի, թանձրացաւ, ամպ

դարձաւ և ծածկեց լեռան ամբողջ գագաթը և անտեսանելի հղաւ Տաղարնաթը:

Անցան տարիներ, անցան դարեր, անցան տասնեակ դարեր:

Եւ ահա ցրուեցաւ լեռան գագաթի ամպը և երևեցաւ Տաղարնաթին Մազադեվան: Առանց կայծակի և որոտման երևեցաւ նա և թախիժ էր արտայայտում նորա երեսը:

— «Նայիր—ասաց նա:

Եւ դարձրեց Տաղարնաթը իւր հայեացքը դէպի հովիտը և հրճուեց նորա սիրտը, որովհետեւ հովիտը նմանում էր մի ծաղկազարդ այգու: Փայլում էր մարգագետինների զմրստանման կանաչը, պարարտ ոչխարները, կովերը և այծերը խաղաղ արածում էին, թեթև բամբին տատանում էր ոսկեփայլ արտերը և ուռցնում արագաթուիչ նաւերի առաջաստները, որոնք սլանում էին ջրանցքի բլուրեղեայ մակերևոյթի վերայով: Հիւթալից պտուղները խոնարհեցնում էին դէպի ցած ծառերի ծանրացած ճիւղերը, իսկ կանաչի միջից հպարտ բարձրանում, շողշողում էին հոյակապ ապարանքների հսկայ պատերը:

— Սա կատարեալ երկնային դրախտ է. բացական չեց Տաղարնաթը հիացմամբ:

— «Նայիր», կրկնեց Մազադեվան:

Եւ բացուեցին Տաղարնաթի աչքերը և նորա ուրտը լցուեց վշտով ու ամօթով: Նա տեսաւ աղբատների լսրը՝ ճիթները, լսեց խեղճերի լաց ու կոծը, տեսաւ ծանր աշխատանքից յոգնած ձեռքեր և տեսաւ ձեռքեր, թուլացած շռայլութիւնից ու փափկասիրութիւնից: Նորա առջև բացուեցին մարդկանց սրտերը և երկրի ամբողջ գեղեցկութիւնը խաւարեցաւ ակտի տգեղութեան առջև:

— «Հասկացիր», ասաց Մազադեվան և անհետացաւ:

Եւ հասկացաւ Տաղարնաթը, որ մարդկանց այլևս չեն զարհուրեցնում հեղեղները, բայց նոցա սրտերը լրցուել են չարութեամբ և նախանձով, ինչպէս զարնանք հովիտները լցում են հեղեղաջրով: Հասկացաւ, որ երաշտութիւն չէ լինում, բայց մարդկանց սրտերը չորացել են սիրոյ ու գթութեան բացակայութիւնից, ինչպէս չորանում է կանաչը արևի տապից: Հասկացաւ, որ հեռա-

ցել են գիշակները, օձերը, բայց մարդիկ իրանք են դարձել գաղաններ և ատելութեան օձը բոյն է դրել նոցա սրտերում:

Եւ իջաւ Տաղարնաթը մարդկանց մօտ և սիրոյ ու անյիշաչարութեան քարոզը հնչեց Քաշեմիրի մի ծայրից մինչև միւսը:

Եւ շատ տարիներ քարոյում էր Տաղարնաթը, մինչև որ բոլոր գոռոզները ու հարստահարիչները չ'բացականչեցին. «սիրենք, եղբարք, բոլոր թոյլ ու ճնշուածներին և օգնութեան ձեռք մեկնենք նոցա, աշխատենք միասին, քանի ոյժ ու կարողութիւն ունինք. մենք բոլորս եւրայրներ ենք, բոլորս էլ մեծ հայր Մազադեվայի որդիքն ենք»: Իսկ թոյլերը ու ճնշուածները բացականչում էին. «սիրենք, սիրենք գոռոզներին ու հարստահարիչներին և ներենք նոցա, որովհետև մենք բոլորս բարեկամ ենք, բոլորս էլ մեծ հայր Մազադեվայի որդիքն ենք»:

Տաղարնաթի սիրտը լցուեց անհուն ուրախութեամբ և չ'կար աշխարհում նորանից աւելի բախտաւոր մարդ:

Օրհնեց նա մարդկանց, բարձրացաւ լեռան գագաթը և ծունկ չորեց Մազադեվայի առջև ջերմ ու փառաբանիչ աղօթք կարդալով:

Եւ բարձրացաւ երկրից գլորշի, թանձրացաւ, ամպ դարձաւ և ծածկեց լեռան գագաթը ու անտեսանելի դարձաւ Տաղարնաթը:

Անցան տարիներ, անցան դարեր, անցան տասնեակ դարեր:

Եւ ահա ձեռքի շարժումով Տաղարնաթը ցրուեց ամպը և բացուեցաւ նորա առջև Քաշեմիրի հովիտը: Նայեց նա ցած և վշտալի հառաչ դուրս պրծաւ նորա կրծքից և այդ հառաչը ցնցեց ամբողջ տիեզերքը, սկսած ովկիանոսի խորքերից մինչև երկնային բարձր աստղերը: Արցունք, դառն այրող արցունք, դուրս ցայտեցին նորա աչքերից և ողողեցին ժայռերը:

Նա տեսաւ, որ մարդիկ մոռացել են նորա քարոզը, որ սիրոյ խօսքեր գրուած են միայն նոցա գրքերում, բայց այդ խօսքերի միտքը անհասկանալի է դարձել նոցա համար: Կրկին ուժեղները նստած են մարմարիօն ապարանք-

ներում, կրկին երկրի բոլոր բարիքները նոցա ձեռքումն են, կրկին յսուամեն թոյլերի զանգատը, ճշուածների տասապանքը: Տեսաւ, որ սիրոյ մեծ ոյժը ցամարել է:

Եւ ընկաւ Տաղարնաթը Մազադեւայի առջև և հոգու բոլոր ոյժերը, սրտի ամբողջ բոցը ամփոփեց մի աղօթքի, մի կոծի մէջ դէպի Մազադեւան:

Լուռ ու անշարժ էր կապոյտ երկնակամարը, վառ փայլող արեւը տեղի էր տալիս մեղմ աստղերին, որոնք հանգչում էին և փայլուն արեւը կրկին կանոնաւոր հերթով փոխարինում էր նոցա... բայց Մազադեւան չէր լըսում ճգնաւորի աղօթքը:

Ընկղմուեց Տաղարնաթը խոր մտածմունքի մէջ և ամպերը ծածկեցին նորան:

Անցան տարիներ, անցան դարեր, անցան տասնեակ դարեր, բայց նա դեռ կանգնած է խորասուզուած խոր մտածմունքի մէջ, թէ ինչպէս բախտաւորեցնէ մարդկային ազգը: Եւ հեղ ու վշտալի արցունքը ծորում են նորա աչքերից, առաջացնում մի փոքրիկ առուակ, որը հոսում է դէպի հովիտը:

Մարդիկ ասում են. որ ուլ խմում է այդ առուակից, նա խելագարւում է և իւր ամբողջ կեանքը անցնում է խոր մտածմունքի մէջ, ինչպէս բախտաւորեցնել մարդկութիւնը:

Ամէնքն էլ ծաղրում են այդպիսիներին և ասում.

— Նա խմել է ցաւակցութեան աղբիւրից, նա արբել է Տաղարնաթի արցունքից:

Ռոչա. Թարգմ. ԱԶ. ՀԱՄԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ.

Պ. Ռուբզ.

